«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/37-1

ք. Երևան «04» 05 2020 թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյանի ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ»-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4733094 /չորս միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար ինսունչորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

ԲՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3	ք.Երևան, Դրոյի 8, բն. 4
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	«Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 2473600002170010	Հ/Հ24105020675400
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 00889965
Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան	Տնօրեն ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«ՕՐԵԿԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒԺԻՆ

Հավելված
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/37-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	18231910/1	Արտահագուստ ամառային	Արտահագուստ ամառային «ԷԼԱԱՄՈ ԴԱ» ՍՊԸ	Կտորի բաղադրությունը 65% բամբակ և 35% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 265 գր/մ2: Կտորը յուղակայուն: Արտահագուստը բաղկացած է բաճկոնից, շապիկից և տաբատից: Կտորի բաղադրությունը 65% բամբակ և 35% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 265 գր/մ2: Կտորը յուղակայուն, ջրադիմացկուն, գույնը՝ էլ. կապույտ՝ օռանժ համադրությամբ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 2,500 Н, յուղակայունությունը ոչ պակաս քան 115 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ: Արտահագուստը պետք է ունենա 9 վրադիր ծավալային գրպան, օռանժ գույնի կափույրներով, որից 5-ը բաճկոնի վրա, իսկ 4-ը տաբատի, կրծքավանդակի շրջագծով, բաճկոնի թևքերին և տաբատի ծնկամասից ներքև կրկնակի 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Բաճկոնի մեջքի կենտրոնական մասում 18 սմ լայնությամբ պետք է դաջվի ԶԷԿ-ի լոգոն: Կրծքավանդակի ձախ մասում ծավալային գրպանի վրա պետք է ասեղնագործվի ԶԷԿ ՓԲԸ: Բաճկոնը և տաբատը պետք է ունենան կարգավորման 2 ական կամրջակ 4-ական կոճակով կոճկվող օղակներով: **Բաճկոնի չափսերը**- 44/3-1հատ, 48/3-9հատ, 48/4-4հատ, 50/2-3հատ, 50/3-12հատ, 50/4-9հատ, 52/2-1հատ, 52/3 -14հատ, 52/4-8հատ, 54/2-2հատ, 54/3-11հատ, 54/4-16հատ, 56/3-5հատ,56/4-9հատ, 58/3-3հատ, 58/4-7հատ, 60/2-1հատ, 60/3-1հատ, 62/3-1հատ, 62/4-2հատ, 66/3-1հատ: Տաբատ-44/3-1հատ, 48/3-9հատ, 48/4-4հատ, 50/2-3հատ, 50/3-12հատ, 50/4-9հատ, 52/2-1հատ, 52/3 -14հատ, 52/4-8հատ, 54/2-2հատ, 54/3-11հատ, 54/4-16հատ, 56/3-5հատ,56/4-9հատ, 58/3-3հատ, 58/4-7հատ, 60/2-1հատ, 60/3-1հատ, 62/3-1հատ, 62/4-2հատ, 66/3-1հատ: Շապիկ- 44/3-1հատ, 48/3-9հատ, 48/4-4հատ, 50/2-3հատ, 50/3-12հատ, 50/4-9հատ, 52/2-1հատ, 52/3 -14հատ, 52/4-8հատ, 54/2-2հատ, 54/3-11հատ, 54/4-16հատ, 56/3-5հատ, 56/4-9հատ, 58/3-3հատ, 58/4-7հատ, 60/2-1հատ, 60/3-1հատ, 62/3-1հատ, 62/4-2հատ, 66/3-1հատ:	լրակազմ	10176	1221120	120	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	120	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում
2	18231910/2	Արտահագուստ ձմեռային	Արտահագուստ ձմեռային «ԷԼԱԱՄՈ ԴԱ» ՍՊԸ	Կտորի բաղադրությունը 100% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 265 գր/մ2: Կտորը յուղակայուն,թթվակայուն, ջրայուղադիմացկուն, գույնը՝ էլ. կապույտ՝ օռանժ համադրությամբ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 2,500 Н, յուղակայունությունը ոչ պակաս քան 115 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ: Արտահագուստը պետք է ունենա 9 վրադիր ծավալային գրպան, դեղին գույնի	լրակազմ	19800	1247400	63	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	63	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում

«ԵՋԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

				կափույրներով, որից 5-ը բաճկոնի վրա, իսկ 4-ը տաբատի: Բաճկոնը ունի տաքացվող հանովի ներդիր, որը մգդակված է 350 գ/մ2 խտությամբ սինթեպոնով, և հանովի մորթե օձիք: Օձիքի մորթու գործվածքի 1մ2 մակերեսային խտությունը 650 գրամ, խավի բարձրությունը 12մմ, գույնը մոխրագույն: Կրծքավանդակի շրջագծով, բաճկոնի թևքերին և տաբատի ծնկամասից ներքև կրկնակի 5 սմ լայնությամբ լուանդրադարձնող ժապավեններ: Բաճկոնի մեջքի մասում՝ լուանդրադարձնող ժապավենի տակ, կենտրոնական մասում, բարձրորակ դեղին գույնով, 5 սմ բարձրությամբ տառերով պետք է ասեղնագործվի ՋԷԿ ՓԲԸ: Կրծքավանդակի ձախ մասում ծավալային գրպանի վրա պետք է ասեղնագործվի ՋԷԿ ՓԲԸ: Բաճկոնը և տաբատը պետք է ունենան կարգավորման 2 ական կամրջակ 4-ական կոճակով կոճկվող օղակներով: Բաճկոնի չափսերը- Չափս 48/3- 2հատ, 48/4-1հատ, 50/2-4հատ, 50/3-6հատ, 50/4-7հատ, 52/3 -2հատ, 52/4-4հատ, 54/2-2հատ, 54/3-9հատ, 54/4-5հատ, 56/3-2հատ, 56/4-7հատ, 58/3-3հատ, 58/4-4հատ, 60/3-1հատ, 62/3-1հատ, 62/4-2հատ, 66/3-1հատ; Տաբատ- Չափս 48/3- 2հատ, 48/4-1հատ, 50/2-4հատ, 50/3-6հատ, 50/4-7հատ, 52/3 -2հատ, 52/4-4հատ, 54/2-2հատ, 54/3-9հատ, 54/4-5հատ, 56/3-2հատ, 56/4-7հատ, 58/3-3հատ, 58/4-4հատ, 60/3-1հատ, 62/3-1հատ, 62/4-2հատ, 66/3-1հատ							
3	18831200/1	Կոշիկ ամառային	Կոշիկ ամառային «ԷԼԱՍՄՈ ԴԱ» ՍՊԸ	Կարված է սև գույնի 2 մմ հաստությամբ խոշոր եղջերավոր կենդանու (КРС) բնական կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով: Ներսի ծածկույթը՝ շնչող ծակոտկեն գործվածքից: Լեզվակը՝ բնական հաստ կաշվից: Ֆուրնիտուրան՝ մետաղյա օղագույցներ, ճիտքերի վրա կեռիկներ (скоростная петля), կապումը կոշկաքուղերով (шнурки): Ներբանը՝ դիմակայուն նավթայուղային նյութերին, քայքայիչ միջավայրին: Պատրաստված մաշակայուն, ջերմակայուն, ցրտադիմացկուն պոլիուրեթանից, խիստ արտահայտված պահպանաշերտով: ներբանը պետք է պահպանի պաշտպանիչ հատկությունը ցածր ջերմաստիճանի՝ -450C, և բարձր ջերմաստիճանի՝ +1200C ժամանակ: Պետք է ապահովի ամրություն ոչ պակաս քան 2 Ն/մմ2, և պնդություն ոչ ավել քան 70 միավոր ըստ ՇՈՌԻ: Կոշիկի տակացուն պետք է ապահովի ոչ պակաս քան 180 Ն/սմ պատռման բեռնվածություն, ինչը շահագործման ամբողջ ընթացքում չպետք է նվազի 25%-ից: Ներբանի կցման եղանակը՝ տաք վուլկանացում: Կոշկաքիթը (подносок)՝ պոլիկառբոնատե՝ ռեզինե եզրաքուղով, հակակոռոզիոն մշակմամբ՝ ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից և 1.5 տոննա սեղմման ուժից պաշտպանելու համար: Պաշտպանիչ քթամասը ներսամասում պետք է ապահովի անվտանգության բացվածք ոչ պակաս քան 20մմ: Միջատակ՝ մետաղական, որն ապահովում է ոտնաթաթի ամբողջ երկարությամբ պաշտպանվածություն սուր ծակող իրերից: Միջատակը ներդրված բարձր հարմարավետությամբ՝ MESH: Կոշիկի դետալների միացումը (բացի երեսացուն տակացուից միացման) պետք է ապահովեն ոչ պակաս քան 120 Ն/սմ պատռման բեռնվածություն: Գույնը՝ սև կամ մուգ մոխրագույն : Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի : Չափսերը- 35-1հատ, 36-2հատ, 37-4հատ, 38-2հատ, 39-4հատ, 40-16հատ, 41-21հատ, 42-21հատ, 43-38հատ, 44-3հատ, 45-2հատ	զույգ	8598	980172	114	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	114	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի և օրվա ընթացքում
4	18811230/1	Կոշիկ ձմեռային	Կոշիկ ձմեռային« ԷԼԱՍՄՈ	Կարված է սև գույնի 2 մմ հաստությամբ խոշոր եղջերավոր կենդանու (КРС) բնական կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով: Ներսի ծածկույթը՝ շնչող ծակոտկեն գործվածքից: Լեզվակը՝ բնական հաստ կաշվից: Ֆուրնիտուրան՝	զույգ	12180	950040	78	ք. Երևան, Արին-Բերդի 3-	78	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ
ԲՈՒՀԱԲԱՆԱԿԱՆ

			ԴԱ» ՍՊԸ	մետաղյա օղագույցներ, ճիտքերի վրա կեռիկներ (скоростная петля), ճիտքի բարձրությամբ պետք էլինի 24-26սմ, կապումը կոշկաքուղերով (шнурки): Ներբանը՝ դիմակայուն նավթայուղային նյութերին, քայքայիչ միջավայրին: Պատրաստված մաշակայուն, ջերմակայուն, ցրտադիմացկուն պոլիուրեթանից, խիստ արտահայտված պահպանաշերտով: ներբանը պետք է պահպանի պաշտպանիչ հատկությունը ցածր ջերմաստիճանի՝ -450C, և բարձր ջերմաստիճանի՝ +1200C ժամանակ: Պետք է ապահովի ամրություն ոչ պակաս քան 2 Ն/մմ2, և պնդություն ոչ ավել քան 70 միավոր ըստ ՇՈՌԻ: Կոշիկի տակացուն պետք է ապահովի ոչ պակաս քան 180 Ն/սմ պատռման բեռնվածություն, ինչը շահագործման ամբողջ ընթացքում չպետք է նվազի 25%-ից: Ներբանի կցման եղանակը՝ տաք վուլկանացում: Կոշկաքիթը (подносок)՝ պոլիկառբոնատ՝ ռեզինե եզրաքուղով, հակակոռոզիոն մշակմամբ՝ ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից և 1.5 տոննա սեղմման ուժից պաշտպանելու համար: Պաշտպանիչ քթամասը ներսամասում պետք է ապահովի անվտանգության բացվածք ոչ պակաս քան 20մմ: Միջատակ՝ մետաղական, որն ապահովում է ոտնաթաթի ամբողջ երկարությամբ պաշտպանվածություն սուր ծակող իրերից: Միջատակը ներդրված բարձր հարմարավետությամբ: Կոշիկի դետալների միացումը (բացի երեսացուն տակացուից միացման) պետք է ապահովեն ոչ պակաս քան 120 Ն/սմ պատռման բեռնվածություն: Գույնը՝ սև կամ մուգ մոխրագույն : Չափսերը- 35-1հատ, 36-2հատ, 37-4հատ, 38-2հատ, 39-3հատ, 40-10հատ, 41-14հատ, 42-16 հատ, 43-18հատ, 44-6հատ, 45-2հատ Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի :								
5	18141100/7	Ձեռնոց	Ձեռնոց«ԷԼ ԱԱՄՈԴԱ » ՍՊԸ	ռետինե ծածկ. Մև/կարմիր յուղակայուն	զույգ	174	34800	200	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	200	Պայմանագի րն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի ն օրվա ընթացքում
6	18141100/8	Բանվորա կան կտորե, ռետինապ ատ ձեռնոցներ	Բանվորա կան կտորե, ռետինապ ատ ձեռնոցներ «ԷԼԱԱՄՈ ԴԱ» ՍՊԸ	Խիտ գործվածքից կարված ձեռնոցներ, պատված հաստ ռետինե շերտով (կապույտ, կարմիր)	զույգ	294	4410	15	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	15	Պայմանագի րն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի ն օրվա ընթացքում
7	18421140/1	Լաբորատ որ ձեռնոց	Լաբորատ որ ձեռնոց«ԷԼ ԱԱՄՈԴԱ » ՍՊԸ	Եվրոպական դասակարգման չափով 8 կամ 8,5 համարի (տղամարդու)	հատ	3480	174000	50	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	50	Պայմանագի րն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի ն օրվա ընթացքում
8	18421130/4	Ձեռնոց տնտեսակ ան, պիլիմերայ ին հումքից, ոչ	Ձեռնոց տնտեսակ ան, պիլիմերայ ին հումքից, ոչ	Տնտեսական ձեռնոց տարբեր չափսերի, պոլիմերային հումքից, ոչ ալերգիկ: Կտորի բաղադրությունը 65% բամբակ և 35% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 265 գր/մ2: Կտորը յուղակայուն, ջրադիմացկուն, գույնը՝էլ. կապույտ՝ օռանժ համադրությամբ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս	զույգ	198	19800	100	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	100	Պայմանագի րն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի ն օրվա ընթացքում

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ

		ալերգիկ	ալերգիկ«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	2,500 Հ, յուղակայունությունը ոչ պակաս քան 115 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ:							
9	18441100/1	Գլխարկ	Գլխարկ«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	Արևապաշտպան, քիրկով, 5-7սմ երկարությամբ	հատ	1488	10416	7	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի և օրվա ընթացքում
10	18811100/1	Կոշիկ ռետինե, երկարաճիտ	Կոշիկ ռետինե, երկարաճիտ«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	Երկարաճիտք, ռետինե: Չափսերը- 41-3հատ, 42-2հատ, 43-1հատ, 45-1հատ	զույգ	3288	23016	7	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի և օրվա ընթացքում
11	35111370/3	Էլ.եռակցողի արտահագուստ	Էլ.եռակցողի արտահագուստ«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	Էլ.եռակցողի արտահագուստ գործվածքը հրակայուն, գույնը-մուք կապույտ կարմիր դրվագով, գործվածքը «Флэймшилд» (100% բամբակ) «Сатин» հրակառուն տեխնոլոգիա,չապսը-50 համար,ТУ 8572-001-72179571-2001	հատ	33960	67920	2	ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցայի և օրվա ընթացքում

** Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումը պետք է իրականացնի մատակարարը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, եթե վերջիններս կիրառելի են առաջարկվող ապրանքների համար: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք.Երևան, Դրոյի 8, բն. 4
«Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ224105020675400
ՀՎՀՀ 00889965

Տնօրեն ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/37-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	Ընդամենը
1	18231910/1	Արտահագուստ ամառային+ [illegible]	Հանձնման ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում	1221120
2	18231910/2	Արտահագուստ ձմեռային		1247400
3	18831200/1	Կոշիկ ամառային		980172
4	18811230/1	Կոշիկ ձմեռային		950040
5	18141100/7	Ձեռնոց		34800
6	18141100/8	Բանվորական կտորե, ռետինապատ ձեռնոցներ		4410
7	18421140/1	Լաբորատոր ձեռնոց		174000
8	18421130/4	Ձեռնոց տնտեսական, պիլիմերային հումքից, ոչ ալերգիկ		19800
9	18441100/1	Գլխարկ		10416
10	18811100/1	Կոշիկ ռետինե, երկարաճիտ		23016
11	35111370/3	Էլեռակցողի արտահագուստ		67920

ԳՆՈՐԴ
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք.Երևան, Դրոյի 8, բն. 4
«Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ224105020675400
ՀՎՀՀ 00889965

Տնօրեն ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/37-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ

Հավելված 3
« » 20 թ. կնքվա
ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/37-1 ծածկագրով պայմանագր

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ